Ի.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը (ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) կրթական և գիտամշակութային հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումն է կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում: Մասնաճյուղը խթանում է իր ուսանողների ու դասախոսների մտավոր և անձնային որակների զարգացումը, նպաստում հանրապետության հյուսիսարևելյան տարածաշրջանի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի զարգացմանը: Մասնաճյուղի գործունեության գերակա նպատակներից է հայագիտության, հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և բնական գիտությունների զարգացումը տարածաշրջանում:

Իր առաքելության համաձայն՝ ԵՊՀ ԻՄ-ը միտված է դառնալու ուսանողակենտրոն միջավայր, ստեղծելու պայմաններ այնպիսի որակյալ կրթական ծառայությունների մատուցման համար, որ բավարարվեն շահակիցների ներկա և հեռանկարային պահանջմունքները: Իր գործունեությամբ մասնաճյուղը ձգտում է պատրաստել անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով օժտված, բարձր որակավորում ունեցող մրցունակ մասնագետներ, ունենալ մանկավարժական բարձրորակ կադրեր, ձևավորել սոցիալապես և մասնագիտորեն պատասխանատու անհատականություններ, ապահովել աշխատակիցների բարոյական և նյութական բավարարվածությունը սեփական աշխատանքի արդյունքներից:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Վերլուծենք և հիմնավորենք, թե որքանով է մասնաճյուղի ռազմավարական ծրագիրը համապատասխանում բուհի առաքելությանը, նպատակներին և խնդիրներին:

Համաձայն ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կանոնադրության առաջին կետի՝ Մասնաճյուղը «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի առանձին ստորաբաժանում է, որի գործունեությունը նպատակաուղղված է տարածաշրջանում հայագիտական, բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար գիտությունների ու տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղություններով կրթության, կիրառական գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը՝ հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական և լրացուցիչ կրթության մակարդակներում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և կրթական ծրագրերով:

ԵՊՀ ԻՄ-ի առաքելությամբ նախանշված է, որ Մասնաճյուղը տարածաշրջանային դերակատարությամբ կրթական և գիտամշակութային հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումն է կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում:

Հետևելով իր առաքելությանը՝ Մասնաճյուղը իրականացնում է ՈԱՇ-ի 6-րդ և 7-րդ մակարդակների բնութագրիչներին համապատասխան կոմպետենցիաներ ձևավորող կրթական ծրագրեր՝ բակալավրի և մագիստրոսի (2012-2015թթ.) որակավորումներով:

Իր առաքելությունը և Ռազմավարական ծրագիրը մշակելիս Մասնաճյուղն առաջնորդվել է ԵՊՀ ռազմավարական ծրագրով:

Մասնաճյուղի առաքելությունը և դրանից բխող նպատակները ամրագրված են ԵՊՀ ԻՄ-ի (2011-2015թթ.) զարգացման ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ, հաստատվել է ԵՊՀ գիտական խորհուրդի կողմից 2011թ.), որը հստակ խնդիրների միջոցով սահմանում է նպատակներին հասնելու ուղիները: ԵՊՀ ԻՄ-ի զարգացման ռազմավարական պլանավորումը նախանշում է, թե ինչ է ցանկանում անել բուհը իր առաքելությունը և հիմնական նպատակները երկարաժամկետ հեռանկարում արդյունավետ կերպով իրականացնելու համար: Ապագա միջավայրը առավել նպաստավոր և կանխատեսելի դարձնելու նպատակով Մասնաճյուղը մշակել է առանձին գործողություններ, որոնց իրականացումը պետք է ապահովի նրա առաջընթացը նախանշված ուղղություններով:

Մասնաճյուղի 2011-2015թթ. զարգացման Ռազմավարական ծրագրի հիմնական նպատակների իրականացման համար նախատեսված էր լուծել շուրջ երկու տասնյակ խնդիրներ, որոնք նպատակաուղղված են ԵՊՀ ԻՄ-ում բարձրորակ կրթության ապահովմանը, գիտական հետազոտությունների և նորարարությունների իրականացմանը, հանրային ներգրավմանը և ծառայությունների զարգացմանը, որակյալ կադրային ներուժի կատարելագործմանը, որակյալ ենթակառուցվածքների ստեղծմանն ու բարելավմանը, որակյալ ծառայությունների տրամադրմանը, ընդունելության բազմազանեցված մուտքի ընդլայնմանը և համապատասխանության բարձրացմանը, ֆինանսական կայությանն ու կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Մասնավորապես, ՌԾ-ի I, IV, V, VI նպատակները (***«Բարձրորակ կրթություն», «Որակյալ կադրային ներուժ», «Որակյալ ենթակառուցվածքներ», «Որակյալ ծառայություններ»***) ուղղված են կրթության ոլորտին, իսկ Խնդիր I ա/, բ/, գ/, դ/, ե/, Խնդիր IV ա/, Խնդիր V ա/, Խնդիր VI ա/ լուծումը ապահովում է նպատակի արդյունավետ իրականացումը:

Գիտության ոլորտին են ուղղված ՌԾ-ի II և V նպատակները ***(«Գիտական հետազոտություններ և նորարարություն», «Որակյալ ենթակառուցվածքներ»),*** որոնց իրականացումն ապահովվում է Խնդիր II ա/ և Խնդիր V ա/ լուծումով:

ՌԾ-ի III նպատակը ***(«Հանրային ներգրավում և ծառայություններ»)*** ուղղված է «Ծառայություն հասարակությանը» ոլորտին, իսկ Խնդիր III ա/ («***Ապահովել հասարակության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային ծրագրերում մասնաճյուղի առավելագույնս ներգրավումը»)*** և Խնդիր III բ/-ի ***(«Զարգացնել հարատև ուսումնառության համակարգը մասնաճյուղում՝ սոցիալական պատվերին համահունչ»)*** լուծումները ապահովում են այս նպատակի իրականացումը:

ԵՊՀ ԻՄ-ը հետևում է իր գերակա նպատակներից բխող ծրագրի իրականացմանը, որովհետև այն մեծապես կնպաստի հաստատության վարկանիշի և մրցակցային դիրքի բարձրացմանը, կբավարարի արտաքին շահակիցների պահանջները: ՈՒսման հաջող ավարտի դեպքում ուսանողները կտիրապետեն մասնագիտական հարուստ գիտելիքների ու կարողությունների, պատրաստ կլինեն հետագա ուսումնառության և հետազոտական աշխատանքի համար:

Ռազմավարական ծրագրի նպատակներն ու խնդիրները տեղաբաշխված են ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանում (հաստատված է Մասնաճյուղի գիտական խորհրդի՝

24.02.2011թ. թիվ 1 արձ.), որտեղ հստակ նշված են կոնկրետ քայլերը, ժամկետները, պատասխանատուները և ռեսուրսները: Վերջինիս հիման վրա մշակվել են միջնաժամկետ և կարճաժամկետ պլան-ժամանակացույցներ:

Ինչպես ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագիրը, այնպես էլ պլան-ժամանակացույցները հրապարակված են մասնաճյուղի կայքէջում և տրամադրվել են կառուցվածքային ստորաբաժանումներին, որոնք իրենց գործունեությունը պլանավորում և իրականացնում են՝ հիմք ընդունելով վերոնշյալ ժամանակացույցները: Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին նրանք կազմում են իրենց աշխատանքային պլանները, իսկ տարեվերջին՝ ԿՈԱԳ բաժնի մշակած ձևաչափով ներկայացնում իրենց գործունեության հաշվետվությունը՝ պլաններում ընդգրկված խնդիրների լուծման տեսանկյունից: Այս գործընթացն ապահովում է, որ Մասնաճյուղում կայացված որոշումները լիովին համապատասխանեն նրա առաքելությանը, բխեն դրանից և ուղղված լինեն դրա իրականացմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Վերլուծենք, թե ինչպես է մասնաճյուղը վերհանում ներքին և արտաքին շահակիցների կարիքները և հիմնավորենք մոտեցման արդյունավետությունը:

ԵՊՀ ԻՄ-ում գործում են արտաքին (մարզային իշխանություն, գործատու, շրջանավարտ, ծնողներ) և ներքին (ուսանող, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմ) շահակիցների կարիքները բացահայտող մի շարք մեխանիզմներ՝ հարցումների անցկացում, հանդիպումների կազմակերպում, կարծիքների ուսումնասիրում և այլն: Դրանք հիմնականում ուղղված են կրթական կարիքների բացահայտմանը և մատուցվող կրթական ծառայություններից շահակիցների բավարարվածության ուսումնասիրություններին: Մասնաճյուղի կառավարման մարմիններում (Գիտական խորհուրդ, Գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողով, ֆակուլտետների գիտական խորհուրդներ) ապահովված է ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը: Այսպես՝ Գիտական խորհրդի անդամների 28,6% -ը, իսկ ՈԿՀ անդամների՝ 57,5% արտաքին շահակիցներ են: Վերջիններս տվյալ օղակների լիիրավ անդամներ են. մասնակցում են քննարկումներին, արտահայտում են իրենց կարծիքը, ներկայացնում են առաջարկներ և մասնակցում որոշումների կայացմանը:

Մասնաճյուղի ներքին և արտաքին շահակիցներն ընդգրկվել են նաև ռազմավարական ծրագիրը մշակելու համար ձևավորված աշխատանքային խմբի կազմում (հիմք՝ հրաման թիվ 144/1 09.10.2015թ.): Ֆակուլտետներում և կառուցվածքային ստորաբաժանումներում շահակիցները ՌԾ-ի մշակման և քննարկման փուլերում իրենց առաջարկությունները ներկայացրել են աշխատանքային խմբի քննարկմանը: ՌԾ-ն ներկայացվել ու հաստատվել է Գիտական խորհրդի ընդլայնված նիստում և տեղադրվել մասնաճյուղի կայքում:

Մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի խնդիր I ա-ն **(«Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ արդի ծրագրային չափանիշներին և տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկին համահունչ»)** իրագործելու համար Մասնաճյուղը հետևում է տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկին և պարբերաբար իրականացնում բակալավրի կրթական ծրագրով մասնագիտությունների ճշգրտում կամ նոր մասնագիտությունների ներառում (տես ***չափանիշ 3-ի աղյուսակ 1-ը***):

Կրթական ծրագրերն արդիականացնելու նպատակով 2011 թվականից կատարվում են տարբեր ծրագրերից մասնաճյուղի ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության վերաբերյալ ուսումնասիրություններ:

Մասնավորապես, իրականացվում են ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումներ: Այդ հարցումների շնորհիվ բացահայտվում են շրջանավարտների բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից, ուսումնական գործընթացի կազմակերպումից, ուսումնառության ռեսուրսներից, օժանդակ ծառայություններից, համալսարանական միջավայրից և այլն (մանրամասն ներկայացված է 3-րդ չափանիշում): Այդ տվյալները մշակվում, վերլուծվում, քննարկվում են տնօրենության և գիտական խորհրդի նիստերում:

2011 թվականից պարբերաբար իրականացվում են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ***պրակտիկանտ-ուսանողների և շրջանավարտների վերաբերյալ հարցումներ,*** որոնք նպատակ ունեն պարզելու արտաքին շահակիցների գնահատականը ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքների, գործնական հմտությունների, մասնագիտական պատրաստվածության վերաբերյալ (մանրամասն ներկայացված են 3-րդ, 4-րդ և 5-րդ չափանիշների վերլուծություններում):

2014 թվականից սկսած՝ մարզի գործատուների հետ մասնաճյուղում պարբերաբար անցկացվում են հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվում են մասնագիտությունների ճշգրտմանը վերաբերող հարցեր, բացահայտվում են (նաև անանուն հարցման միջոցով) մասնաճյուղի շրջանավարտների տեսական ու գործնական պատրաստվածության վերաբերյալ խնդիրները: Այդ հանդիպումների շնորհիվ մատնանշվում են մեր շրջանավարտների որոշ թերություններ և առավելություններ, պրակտիկաների, կուրսային ու ավարտական աշխատանքների թեմատիկայի ընտրության և իրականացման հարցում հաշվի են առնվում արտաքին շահակիցների (գործատուների) առաջարկությունները, ապահովվում է նրանց անմիջական մասնակցությունն այդ գործում: 2014 թվականից սկսած՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների անդամ-գործատուների շրջանում նույնպես անց է կացվում հարցում՝ նրանց մոտ աշխատող մեր շրջանավարտների մասնագիտական որակների վերաբերյալ:

Մասնաճյուղի տնօրենը պարբերաբար հանդիպումներ է ունենում մարզի դպրոցների տնօրենների հետ, քննարկում մարզի կրթության ոլորտին վերաբերող մի շարք խնդիրներ: Ուսումնամեթոդական վարչության Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկաների կազմակերպման բաժինը պարբերաբար ուսումնասիրում է դպրոցների շրջանավարտների մասնագիտական կողմնորոշվածության ուղղությունները, առանձնացնում այն մասնագիտությունները՝ որոնց դիմորդները գնում են Երևան սովորելու: Այդ քննարկումներն ու ուսումնասիրություններն ուղղորդում են մասնագիտությունների ճշգրտման գործում:

ԵՊՀ ԻՄ-ի ներքին շահակիցների կարծիքների ուսումնասիրության մեխանիզմ է դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները, որոնց միջոցով ուսանողները գնահատում են իրենց ֆակուլտետի դեկանի, նրա տեղակալի, դեկանատի գործավարների, ուսումնական խորհրդատուների աշխատանքները, դասախոսների դասավանդման որակը և մասնագիտական կարողությունները, կատարում նրանց աշխատանքները բարելավելու առաջարկներ (մանրամասն ներկայացված է 5-րդ չափանիշում):

Ներքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության կարևորագույն գործիքներից են «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից բավարարվածության ուսումնասիրության» հարցումները, որոնց միջոցով ուսումնառողները և աշխատակիցները գնահատում են իրենց բավարարվածությունը

մասնաճյուղի ռեսուրսներից ու ծառայություններից, ենթակառուցվածքների ու ստորաբաժանումների աշխատանքից, հանդես գալիս մասնաճյուղի գործունեությունը բարելավելու առաջարկություններով:

ԵՊՀ ԻՄ-ի կողմից կազմակերպված պրակտիկաների կազմակերպման արդյունավետության բարձրացման նպատակով 2015թվականից պրակտիկանտ-ուսանողների շրջանում անց են կացվում հարցումներ:

Մասնաճյուղի տնօրենը, ֆակուլտետների դեկանները, ամբիոնների վարիչներն ու ուսումնական խորհրդատուներն ունեն ընդունելության հստակ ժամանակացույցներ, որոնց շրջանակներում մեր ներքին շահակիցները (դասախոսներն ու ուսանողները) անկաշկանդ ներկայացնում են իրենց հուզող խնդիրները: Այդպիսի հանդիպումներ կազմակերպվում են նաև ժամանակացույցներից անկախ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Կատարենք Ռազմավարական ծրագրի իրականացման և որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների վերլուծություն: Վերլուծենք, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն իր առաքելության և նպատակների իրականացման արդյունքները գնահատելու համար կիրառում է գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ), տնօրենի ու ստորաբաժանումների ղեկավարների տարեկան հաշվետվությունների կազմման և վերլուծության մեխանիզմները:

ՌԾ-ի կատարման առաջընթացի վերահսկման և գնահատման նպատակով Մասնաճյուղում 2009 թվականից սկսած կազմվում և հրատարակվում է ԵՊՀ ԻՄ-ի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմը: ԳԱՑ-ը ռազմավարական պլանավորման գործընթացի տարբեր փուլերի և քայլերի արդյունքները չափելու և վերլուծելու գործիք է, որում առանձնացված են հետևյալ 6 բնագավառները՝ «Ընդունելություն և ուսանողական համակազմ», «Ուսումնական գործընթաց», «Ռեսուրսներ և կառավարում», «Ենթակառուցվածքներ», «Գիտություն և ինովացիա», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ»:

Որպես չափիչ գործիք՝ ԳԱՑ-ը կոնկրետ է, պարզ և հաշվարկելի: Այն վեր է հանում ԵՊՀ ԻՄ-ի ձեռքբերումները և թույլ կողմերը՝ նրա հետագա զարգացումը առավել արդյունավետ կազմակերպելու համար: Մասնաճյուղը յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին իր աշխատակիցներին և հանրությանն է ներկայացնում ԳԱՑ-ի վերջին հաշվետվությունը՝ այսինքն վերջին 5 տարիների ցուցանիշները և ապահովում նրա հրապարակայնությունը:

Մասնաճյուղի <u>պլանավորման գործընթացն</u> իրականացվում է **վերևից ներքև**. նախ կազմվում է մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագիրը, ապա ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցը, ըստ այդմ՝ ֆակուլտետների և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային պլանները, ամբիոնների աշխատանքային պլանները և դասախոսների անհատական աշխատանքային պլանները: Մասնաճյուղի <u>հաշվետվողականությունն</u> իրականացվում է **ներքևից վերև**. օրինակ՝ դասախոսները ներկայացնում են իրենց հաշվետվություններն ամբիոնի նիստում, որոնց հիման վրա ամբիոնի վարիչը հաշվետվություն է ներկայացնում ֆակուլտետի խորհրդի նիստում, ամբիոնի վարիչների հաշվետվությունների հիման վրա ֆակուլտետների դեկանները

հաշվետվություն են տալիս նախ ֆակուլտետի խորհրդի նիստում, ապա գիտական խորհրդի նիստում: Տնօրենը Մասնաճյուղի տարեկան գործունեությունը ներկայացնում է նախ Մասնաճյուղի գիտական խորհրդում, ապա ԵՊՀ-ի գիտական խորհրդում, իսկ ԵՊՀ-ի ռեկտորը Համալսարանի խորհրդի նիստում: Հաշվետվությունները տպագրվում և հրապարակվում են ԵՊՀ-ի և ԵՊՀ ԻՄ-ի կայքէջերում:

2015թ.-ի դեկտեմբերին, ըստ բոլոր ստորաբաժանումների հաշվետվությունների, կազմվել է ԵՊՀ ԻՄ-ի զարգացման 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի իրականացման հաշվետվությունը, որը ներկայացվել է Մասնաճյուղի տարեվերջյան գիտական խորհրդի նիստում, տպագրվել և հրապարակվել մասնաճյուղի կայքէջում **/http://ijevan.ysu.am/wp-content/uploads/2011/08/report-Strategic-Development-Plan-2011-15.pdf/**:

Ռազմավարական ծրագրի նպատակներին և խնդիրներին համապատասխան կազմված զեկույցը հնարավորություն է տվել գնահատել մասնաճյուղում ռազմավարական նպատակների իրականացման կատարողականը, արձանագրել ձեռքբերումներն ու բացթողումները բոլոր խնդիրների ոլորտներում, պլանավորել հաջորդ ռազմավարական ծրագրով դրանց բարեփոխումները:

Վերոնշյալ գործիքները և մեխանիզմները հնարավորություն են տալիս կառավարել ՌԾ-ի իրականացման ընթացքը, ամրագրել ձեռքբերումները, վեր հանել թերացումները և պլանավորել բարեփոխումները: Բարեփոխումների հիմնական նպատակը ուսուցման որակի բարելավումն է արդյունավետ միջոցներով ու ժամանակակից կրթության պահանջներին համապատասխանող չափորոշիչներով:

Չափանիշ 1-ի վերաբերյալ ներկայացնել SWOT վերլուծություն՝ վերջին 5 տարիների համար:

Ուժեղ կողմեր (Strengths)	**Հնարավորություններ (Opportunities)**
1. Մասնաճյուղի՝ հստակ ձևակերպված առաքելության առկայությունը, որը համահունչ է ՌԱՇ-ին: 2. Մասնաճյուղի ռազմավարական ծրագրի առկայությունը: 3. Տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան՝ մասնաճյուղում անհրաժեշտ մասնագիտությունների առկայությունը: 4. Ռազմավարական ծրագրի գնահատման և վերանայման գործընթացում արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությունը: 5. Ռազմավարական ծրագրի իրականացումը գնահատելու մեխանիզմների և գործիքների առկայությունը: 6. Ռազմավարական ծրագրի իրականացման հաշվետվողականությունը:	1. Տարածաշրջանի աշխատաշուկան որակյալ մասնագետներով ապահովելու գործում ՄՈՒՀ-ի գերակշռող դերը: 2. Արտաքին շահակիցների հետ համագործակցությունը: 3. Արտաքին ֆինանսական նոր աղբյուրները:
Թույլ կողմեր (Weaknesses)	**Վտանգներ (Threats)**

1. Առաքելության մեջ նոր (մագիստրոսի) որակավորման վրա հղման բացակայությունը: 2. Մասնաճյուղի թույլ համագործակցությունը տարածաշրջանի կազմակերպությունների հետ: 3. Հետազոտական ոլորտում ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ լաբորատորիաների թույլ հագեցվածությունը:	1. Տարածաշրջանում մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող նույնատիպ այլ մուտքերի բացակայությունը: 2. Մասնաճյուղի մրցակցային առավելությունը տարածաշրջանի այլ ՄՈՒՀ-երի նկատմամբ: 3. Աշխատաշուկայի պահաջարկի փոփոխությունը: 4. Գործազրկության բարձր մակարդակը և տարածաշրջանում կադրերի գերհագեցվածությունը:

Օգտվելով ներքին ուժեղ կողմերից և արտաքին հնարավորություններից ու հաշվի առնելով արտաքին վտանգները՝ մասնաճյուղը վարում է այնպիսի քաղաքականություն, որը նրան թույլ կտա պահպանել ուժեղ կողմերը, նվազեցնել թույլ կողմերը:

Մասնաճյուղը նախատեսում է վերանայել իր առաքելությունը՝ համապատասխանեցնելով որակի ներքին ապահովման համակարգի պահանջներին, ստեղծել նոր կապեր և ակտիվացնել գործող կապերը տարածաշրջանի արտաքին շահակիցների հետ, ըստ ՌԾ-ի կատարողականի բացթողումները տեղափոխել հաջորդ ռազմավարական ծրագիր՝խնդիրների վերհանմանը և ծրագրի մշակմանը մասնակից դարձնելով ներքին և արտաքին շահակիցներին: